ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության

Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ Հովհաննիսյան Ա. Ռ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը քրեական դատավարությունում

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն.

Օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների լուծումը ենթադրում է ոչ միայն օրենքի իմացություն և գործնականում դրա անշեղ կատարում, այլև օպերատիվ-հետախուզական գործունեության էության, դրա հիմքում ընկած այն օրինաչափությունների իմացություն, որոնցով այն զարգանում է: Միայն այդ կարևոր պայմանների պահպանման դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեությունը կիրագործի իր նպատակը:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունն (այսուհետ՝ ՕՀԳ) անքակտելիորեն կապված է քրեական դատավարության հետ, ընդ որում այդ կապն ուրվագծվում է ՕՀԳ և քրեական դատավարության գոյության բոլոր մակարդակներում՝ որպես իրավապահ գործունեության տեսակ, իրավունքի (օրենսդրության) ճյուղ և գիտություն:

Հարկ է նշել, որ որպես պետական գործունեության տեսակներ քրեական դատավարությունը և ՕՀԳ-ն հարաբերակցվում են միայն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցավորության դեմ պայքարի խնդիրների լուծման մասին: Որպես կանոն հենց ՕՀԳ իրականացմամբ է սկսվում հանցագործության բացահայտման ուղղությամբ ակտիվ աշխատանքը: Ժամանակային տեսանկյունից ՕՀԳ-ն «առավել մոտ է կանգնած» հանցագործության հայտնաբերման պահին, քանի որ իդեալական տարբերակում օպերատիվ աշխատանքը սկսվում է տաք հետքերով և իր առջև խնդիր ունի ոչ միայն հայտնաբերել, նախազգուշացնել, խափանել կամ բացահայտել հանցանքը, այլ նաև հայտնաբերել ու պարզել այն նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց: Այդ իսկ պատճառով ՕՀԳ արդյունքները կարող են քրեական դատավարությունը սկսելու համար առիթ և հիմք հանդիսանալ:

Միաժամանակ, ոչ միայն չի բացառվում, այլ ընդհակառակը՝ ենթադրվում է այդ ընթացքում օպերատիվ-հետախուզական և քննչական գործողությունների համադրում: Քրեական գործի քննության ընթացքում անցկացվող օպերատիվ-հետախուզական և քննչական գործողությունները միմյանց սերտորեն կապված են կազմակերպական միջոցառումներով, կառավարչական և վարութային որոշումներով: Մասնավորապես՝ հանցագործությունների քննության ընթացքում ստեղծվում են օպերատիվ-քննչական խմբեր, պարտադիր կարգով հաշվի են առնվում ՕՀԳ

հնարավորությունները, քննարկվում են քննչական գործողությունները օպերատիվ-հետախուզական միջոցառումներով (այսուհետ՝ ՕՀՄ) ուղեկցման հարցերը, իրականացվում է դրանց անցկացման պլանավորումը և վերջապես՝ այդ գործողությունների համադրման հիման վրա կառուցվում է քննության մարտավարությունը:

ՕՀԳ և քրեական դատավարության ընթացքում ձեռքբերված տվյալների հիման վրա առաջ քաշվում և ստուգվում են վարկածներ՝ ՕՀՄ-ների և քննչական գործողությունների անցկացմամբ, օպերատիվ տվյալները ներթափանցում են քրեադատավարական ապացուցման ոլորտ կամ ծառայում են որպես քննչական գործողությունների անցկացման հիմք:

ՕՀԳ և քրեական դատավարության առավել սերտ ինտեգրման հանրային պահանջը հատկապես նկատելի է արդի պայմաններում՝ կապված հանցավորության կազմակերպված և անդրազգային դրսևորումների ակտիվացման հետ, ինչի մասին են վկայում քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած լուծումները:

2. Դասընթացի նպատակը և խնդիրը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար մակարդակով ծանոթացնել քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքների օգտագործման ուղղությունների, այդ արդյունքների օգտագործման կապակցությամբ ծագող հասարակական հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջների հետ, ինչպես նաև նպաստել ուսանողների մոտ քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքների օգտագործման միջազգային-իրավական, տարածաշրջանային համակարգերի և ներպետական միջոցների վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը:

Կրթական դասընթացի հիմնական խնդիրն է քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքների օգտագործման ոլորտում ուսանողների մոտ ձևավորել կայուն գիտելիքներ և հետազոտական կարողություններ:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

1. **Իմանան** քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքների օգտագործման հայեցակարգի, այդ ընթացքում ծագող և դաղարող հասարական հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների մասին:

2. **Կարողանան** կիրառել քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքների օգտագործման ինստիտուտը կազմող իրավական նորմերը:

3. **Ունակ լինեն** իրականացնել պրակտիկ քրեական դատավարական գործունեություն:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	**Ամբողջը, ակ. ժամ.**	**Բաշխում ըստ կիսամյակների**					
		1 Կիս.	**2 Կիս.**	**3 Կիս.**	**4 կիս.**	**5 Կիս.**	**6 Կիս.**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**72**		**72**				
1.1. Լսարանային պարապմունքներ:	**18**		**18**				
1.1.1. Դասախոսություններ	**10**		**10**				
1.1.2. Սեմինարներ	**8**		**8**				
1.2. Ինքնուրույն աշխատանք	**54**		**54**				
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Քննություն**		**Քննություն**				

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Սեմինար (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Բաժին 1. Քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման ընդհանուր դրույթները				
Թեմա 1.1. Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության ծագման և զարգացման հիմնախնդիրները	**13**	**2**	**1**	**10**
Թեմա 1.2. Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցությունը	**13**	**2**	**1**	**10**
Բաժին 2. Քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման ուղղությունները				
Թեմա 2.1. Քրեական գործի հարուցման փուլում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները	**14**	**2**	**2**	**10**
Թեմա 2.2. Քննչական գործողությունների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները	**16**	**2**	**2**	**12**
Թեմա 2.3. Քրեադատավարական ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման	**16**	**2**	**2**	**12**
Ընդամենը	**18**	**10**	**8**	**54**

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Բաժին 1. Քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման ընդհանուր դրույթները

Թեմա 1.1. Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության ծագման և զարգացման հիմնախնդիրները

- Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության՝ որպես իրավաբանական գիտության կայացման փուլերը:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության մեթոդաբանությունը:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների կրիմինալիստիկական հիմքերը:

Թեմա 1.2. Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցությունը

- Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցությունը որպես իրավապահ գործունեության տեսակ:
- Քրեական դատավարության իրավունքի և օպերատիվ-հետախուզական իրավունքի հարաբերակցությունը:
- Քրեական դատավարության գիտության և օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության հարաբերակցությունը:

Բաժին 2. Քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման ուղղությունները

Թեմա 2.1. Քրեական գործի հարուցման փուլում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները

- «Քրեական գործի հարուցման առիթ» և «քրեական գործի հարուցման հիմք» հասկացությունների սահմանման հիմնահարցը քրեական դատավարությունում:

- Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների հասկացության սահմանման հիմնախնդիրը:
- Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիան որպես քրեական գործի հարուցման առիթ և հիմք:
- Օպերատիվ նախնական տեղեկատվության ստուգման խորությունը, հանցագործության հատկանիշները մատնանշող անհրաժեշտ և բավարար տեղեկությունները:
- Քրեական գործի հարուցումը հետաձգելու հիմնախնդիրը:

Թեմա 2.2. Քննչական գործողությունների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները

- Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես քննչական գործողությունների անցկացման փաստական տեղեկատվական հիմք:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես քննչական գործողությունների անցկացման մարտավարական օժանդակ միջոց:

Թեմա 2.3. Քրեադատավարական ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները

- Օպերատիվ-հետախուզական ճանաչման և քրեադատավարական ապացուցման հարաբերակցությունը:
- Ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման քրեադատավարական (իրավական) կարգավորումը:
- Օպերատիվ-ծառայողական փաստաթղթերը որպես «այլ փաստաթղթեր»: Օպերատիվ-հետախուզական ճանապարհով հայտնաբերված առարկաների և փաստաթղթերի օգտագործումը որպես իրեղեն ապացույցներ:

4. Գրականության ցանկ

Պարտադիր գրականություն

1. *Бодренков В.А.* Проблемы оперативно-розыскного обеспечения предупреждения совершения преступлений: монография / под. ред. В.К. Зникина, А.Г. Халиулина, А.Ю. Шумилова. – М.: изд. дом И.И. Шумиловой, 2009.
2. Ավետիսյան Դ., Դանիելյան Ա. Դատական վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական միջոցառումների նկատմամբ (ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերլուծություն) | Գիտական աշխատությունների ժողովածու, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, էջ 323-328
3. Մելքոնյան Դ. Որոշ նկատառումներ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ | ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության, Քաղաքացիական իրավունքի և Քրեական իրավունքի ամբիոնների կազմավորման 70-ամյակին նվիրված գիտական նյութերի ժողովածու, Երևան, 2007, ԵՊՀ հրատ., էջեր 92-100.
4. «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձաքննության ոլորտում» Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵրևանԾաղկաձոր, 16-17 հունիսի 2015թ./ ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո, խմբ. Խորհուրդ՝ Ա.Ջավադյան և ուրիշ.- Երևան-Ծաղկաձոր, 2015, 245 էջ:
5. «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության եվ քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի (թեզիսների) ժողովածու նվիրված հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի«փորձաքննությունների ազգային բյուրո» պոակ-ի հիմնադրման 15-ամյակին 2019թ. սեպտեմբերի 25-27, Երևան
6. Ենգիբարյան Վ. Գ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
7. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա:| Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ

8. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ
9. Громов Н.А., Пономаренко В.А., Гущин А.Н., Францифоров Ю.В. Доказательства, доказывание и использование результатов оперативно-розыскной деятельности: учеб. пособие. – М.: Приор, 2001.
10. Доля Е.А. Формирование доказательств на основе результатов оперативно-розыскной деятельности: монография. – М.: Проспект, 2009.
11. Зажицкий В.И. Результаты оперативно-розыскной деятельности в уголовном судопроизводстве: теория и практика. – СПб.: Юридический центр Пресс, 2006.
12. Теория оперативно-розыскной деятельности / Вагин О. А., Горяинов К. К., Земскова А. В. и др. //под ред. К. К. Горяинова, В. С. Овчинского. - 4-е изд., перераб. и доп. - Москва : Норма : ИНФРА-М, 2017. – 760 с.
13. Теория и практика использования результатов оперативно-розыскной деятельности в уголовном судопроизводстве: Материалы международной научно-практ. конференции / Под ред. К.К. Горяинова. – М. 2002.
14. Чувилев А.А. Оперативно-розыскное право: монография. – М.: НОРМА-ИНФРА, 1999. – 80 с.

Լրացուցիչ գրականություն

1. Իրավական փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. խմբ.):
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (1998 թ.):
3. «Դատախազության մասին» ՀՀ օրենք (2007 թ.):
4. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք (2001 թ.):
5. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք (2007 թ.):
6. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-871 որոշումը (2010 թ.):
7. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-926 որոշումը (2010 թ.):

8. Գրականություն (ձեռնարկներ և ընթերցանության նյութեր)

1. Атмажитов В.М. О сущности оперативно-розыскной деятельности: Труды /Академия управления МВД России. М., 2008. № 1 (5). С. 66 – 70.
2. Атмажитов В.М., Бобров В.Г. Оперативно-розыскные мероприятия: Актуальные вопросы теории и практики // Государство и право. 2005. № 3. С. 23 – 31.

3. Афанасьев В.Г. Общество: системность, познание и управление. -М., 1981.
4. Вагин О.А. О концепции совершенствования оперативно-розыскного закона // Оперативник (сыщик), 2005. № 3 (4). С. 7 – 8.
5. Водько Н.П. Некоторые направления совершенствования оперативно-розыскного законодательства // О совершенствовании правового регулирования оперативно-розыскной деятельности правоохранительных органов и специальных служб Российской Федерации: материалы семинара (Москва, 24 марта 2005 г.). – М., 2005. С. 179 – 186.
6. Водько Н.П. Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности» в системе Российского законодательства: проблемы и решения: монография. – М.: изд. дом И.И. Шумиловой, 2007. – 131 с.
7. Железняк Н.С. «Черные дыры» и «белые пятна» в законодательном определении понятия и задач оперативно-розыскной деятельности // Оперативник (сыщик), 2005. № 2 (3). С. 10 – 13.
8. Кривенко А.И. Взаимодействие следователя и оперативных подразделений при выявлении, раскрытии и расследовании преступлений. – М.: Инфра-М, 2003. – 139 с.
9. Нагиленко Б.Я. О понятии результата оперативно-розыскной деятельности // Оперативник (сыщик), 2006. № 4 (9). С. 21 – 26.
10. Проблемы теории и практики оперативно-розыскной деятельности: Материалы научно-практ. конференции / Под ред. К.К. Горяинова, И.А. Климова. – М.: ВНИИ МВД России, 2002.
11. Синилов Г.К. О некоторых итогах развития теории оперативно-розыскной деятельности за последние 15 лет (1990 – 2005 гг.) и ее актуальных проблемах на ближайшую перспективу // Оперативник (сыщик), 2005. № 3. С. 9 – 18.
12. Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности»: научно-практ. коммент. / под ред. А.Е. Чечетина. 10-е изд., перераб. и доп. – Барнаул.: БЮИ МВД России, 2005. – 224 с.
13. Энциклопедия МВД России / гл. редактор: В.Ф. Некрасов. – М.: ОЛМА-ПРЕСС; Объединенная редакция МВД России, 2002. – 623 с.
14. Вагин О.А. и др. Оперативно-розыскные мероприятия и использование их результатов: Учебное пособие/О.А.Вагин и др.- М., 2006.
15. Вагин О.А., Гаврилов Г.Я., Горяинов К.К. и др. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М.: Норма, 2006. – 447 с.

16. Вагин О.А., Исиченко А.П., Чечетин А.Е. Постатейный комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М.: Деловой двор, 2009. – 328 с.
17. Вагин О.А., Исиченко А.П. Постатейный комментарий к ФЗ «Об оперативно-розыскной деятельности». – М.: Экзамен, 2006. – 479 с.
18. Гармаев Ю.П. Использование результатов ОРД при расследовании уголовных дел: Практическое пособие / Ю.П.Гармаев. – М., 2005.
19. Зникин В.К. Оперативно-розыскная деятельность как система добывания и собирания уголовно-процессуальных доказательств: учеб. пособие. – Кемерово.: Кемеровский гос. университет, 2000. – 148 с.
20. Киселев А.П. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности»: Постатейный. – М.: Ось-89, 2007. – 222 с.
21. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации: науч.-практическое издание / Под общ. ред. В.В. Мозякова, С.И. Гирько, Г.В. Мальцева, И.Н. Барцица. – М., 2003.
22. Кореневский Ю.В., Токарева М.Е. Использование результатов оперативно-розыскной деятельности в доказывании по уголовным делам: метод. пособие. – М.: Юрлитинформ, 2000. – 144 с.
23. Оперативно-розыскная энциклопедия / авт. сост. А.Ю. Шумилов. – М.: изд-во И.И. Шумиловой, 2004. – 364 с.
24. Смирнов М.П. Законодательное регулирование оперативно-розыскной деятельности в Российской Федерации и за рубежом: учеб. пособие. В 2 ч. Ч. 1. 4-е изд., расшир. и перераб. – М.: Московский новый юрид. институт; Интеллект-Центр, 2010. – 448 с.
25. Смирнов М.П. Законодательное регулирование оперативно-розыскной деятельности в Российской Федерации и за рубежом: учеб. пособие. В 2 ч. Ч. 2. 4-е изд., расшир. и перераб. – М.: Московский новый юрид. институт; Интеллект-Центр, 2010. – 416 с.
26. Смирнов М.П. Комментарии оперативно-розыскного законодательства Российской Федерации и зарубежных стран: учеб. пособие. – М.: Экзамен, 2002. – 544 с.
27. Смушкин А.Б., Китрова Е.В., Кузьмин В.А. Постатейный комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М.: ГроссМедиа-РОСБУХ, 2008. – 232 с.
28. Шумилов А.Ю. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». 7-е изд., доп. и перераб. – М.: изд. дом И.И. Шумиловой, 2007. – 375 с.

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն և դրան հետևելու կարողություն, տեսական և իրավական աղբյուրների օգտագործման էթիկա, հղումների ճշգրտություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

6. Պրակտիկ բլոկ

6.1. Սեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը: բանավոր հարցում:

Թեմա 1.1. Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության ծագման և զարգացման հիմնախնդիրները

Հարցեր քննարկման համար.

- Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության՝ որպես իրավաբանական գիտության կայացման փուլերը:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության մեթոդաբանությունը:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների կրիմինալիստիկական հիմքերը:

Թեմա 1.2. Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցությունը

Հարցեր քննարկման համար.

- Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցությունը որպես իրավապահ գործունեության տեսակ:
- Քրեական դատավարության իրավունքի և օպերատիվ-հետախուզական իրավունքի հարաբերակցությունը:
- Քրեական դատավարության գիտության և օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության հարաբերակցությունը:

Թեմա 2.1. Քրեական գործի հարուցման փուլում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները

Հարցեր քննարկման համար.

- «Քրեական գործի հարուցման առիթ» և «քրեական գործի հարուցման հիմք» հասկացությունների սահմանման հիմնահարցը քրեական դատավարությունում:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների հասկացության սահմանման հիմնախնդիրը:
- Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիան որպես քրեական գործի հարուցման առիթ և հիմք:
- Օպերատիվ նախնական տեղեկատվության ստուգման խորությունը, հանցագործության հատկանիշները մատնանշող անհրաժեշտ և բավարար տեղեկությունները:
- Քրեական գործի հարուցումը հետաձգելու հիմնախնդիրը:

Թեմա 2.2. Քննչական գործողությունների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները

Հարցեր քննարկման համար.

- Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես քննչական գործողությունների անցկացման փաստական տեղեկատվական հիմք:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես քննչական գործողությունների անցկացման մարտավարական օժանդակ միջոց:

Թեմա 2.3. Քրեադատավարական ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հիմնախնդիրները

Հարցեր քննարկման համար.

- Օպերատիվ-հետախուզական ճանաչման և քրեադատավարական ապացուցման հարաբերակցությունը:
- Ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման քրեադատավարական (իրավական) կարգավորումը:
- Օպերատիվ-ծառայողական փաստաթղթերը որպես «այլ փաստաթղթեր»: Օպերատիվ-հետախուզական ճանապարհով հայտնաբերված առարկաների և փաստաթղթերի օգտագործումը որպես իրեղեն ապացույցներ:

Մագիստրոսական թեզի թեմաների հնարավոր ցանկ

1. Կոռուպցիոն հանցագործությունների փաստով հարուցված քրեական գործերով ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման մարտավարական և իրավական հիմնախնդիրները:
2. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեադատավարական ինկորպորացիայի հիմնախնդիրները ՀՀ-ում:
3. Օպերատիվ վարույթի նյութերի հիման վրա քրեական գործի հարուցման հիմնախնդիրները:
4. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների հիման վրա քննչական գործողությունների կատարման հիմնախնդիրները:
5. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների հիման վրա քրեադատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշման կայացման հիմնախնդիրները:
6. Օպերատիվ վարույթի ընթացքում կրիմինալիստիկական փորձաքննությունների (հետազոտությունների) կատարման հիմնախնդիրները:

7. Մեթոդական բլոկ

Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը.

Ուսուցման մեթոդները դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:

Դասավանդման մեթոդների օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսանողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում կարողություններ և

հմտություններ: Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- լինեն բազմատեսակ,
- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- նպաստեն ուսանողների և դասախոսների արդյունավետ հաղորդակցմանը,
- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին,
- դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: